

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՉ ԱՏՈՒՑ ՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N094102-16բ

թ. Երևան

<<31>> 01. 2018 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Լ.Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետև Պատվիրատու մի կողմից, և <<Գործիսի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ը, ի դեմս համալսարանի տեղտոր՝ Ա. Ղուկասյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի 09.4.1.02.բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում Գործիսի պետական համալսարանի անվճար համակարգում ընդգրկված միջին տարեկան 77 ուսանողների համար հաշվարկված, ինչպես նաև ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողներին, ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցման պարտավորությունները:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է՝ 46 900 500 (քառասունվեց միլիոն ինը հարյուր հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որը ներառում է անվճար համակարգի ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցումը՝ 40 637 500 (քառասուն միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցումը՝ 3 780 000 (երեք միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը՝ 2 408 000 (երկու միլիոն չորս հարյուր ութ հազար) ՀՀ դրամ և սահմանամերձ համայնքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը՝ 75 000 (յոթանասուն հինգ հազար) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.3. Պատվիրատուին իրավունք է վերապահվում պայմանագրով ամրագրված գումարի չափը փոփոխել՝ ավելացնել կամ նվազեցնել:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՍՄԻՐԵԼՈՒ ԵՎ ԾԱՌՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏ ՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑ ԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

Կատարող

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

<<Գործիսի պետական համալսարան>>

ՊՈԱԿ

թ. Երևան, Կառավարական 2 շենք

թ. Գործիս, Ավանգարդ 4

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական

<<ՎՏԲ - Հայաստան>> Գործիսի մ/ճ

վարչություն

չ/չ 160141084741

չ/չ 900011034130

Նախարարության աշխատակազմի

Ռեկտոր

ղեկավար

Ս. Ղուկասյան (ստորագրություն)

Լ.Հարությունյան (ստորագրություն)

Կ.Տ

Կ.Տ

